ԳԼՈՒԽ ԺԵ
ՍՐԲԻ ՄՆԱՑԱԾ ՆՇԽԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Օհանավանքում մնացին սրբի մասունքները մինչև վրաց իշխանությունը Հայաստանից վերացավ, Հայաստանին տիրեցին տաճիկները, այսինքն՝ օսմանցիները: Երբ ուխտավորները սրբի (Գեորգի) տոնի օրը գալիս էին, խուռնամբոխ ժողովրդի շատությունից մանուկները քարերից վայր էին ընկնում, իսկ տեղերի տերերը բռնելով վանականներին՝ տուգանում էին, որից նեղվելով, նրանք Սրբի տոնի օրը սուրբը տանում էին Կարբի: Այնտեղ նույնպես նեղություն էր լինում, որովհետև ուխտավորների համար տեղ չէր մնում: Ապա կարբեցիք մտածեցին և շինեցին մի փոքրիկ մատուռ Մուղնի գյուղի մոտ՝ ճանապարհի եզրին և նրան կից փայտյա գավիթ և Սրբի տոնի օրը (նշխարը) տանում էին այնտեղ: Ուխտը ավարտելուց հետո դարձյալ տանում էին Օհանավանք:

Եվ հետո նեղվեցին տանել բերելով, մտածեցին այնտեղ թողնել սուրբ մասունքները և վանքի մի աբեղա այնտեղ մնա և սպասավորի, իսկ մուտքը ուղարկել Օհանավանք մինչև շատ տարիներ: Հետո նա եղավ վանք, գոթիները ելան Օհանավանից և գնացին այնտեղ, ուխտավորների տված մուտքը երկու բաժին էին անում, որովհետև Օհանավանքի միաբաններից մեկը տարին բուն այնտեղ էր նստում, որ ինչ (եկամուտ) գալիս էր, երկու բաժին էին անում երկու վանքերի վրա: Եվ քանի եկող-գնացողը վանքի հաշվին ուտում-խմում էին, իսկ Օհանավանքը չէր օգնում նրան, և Մուղնու վանքը մեծ պակասություն ուներ, ուստի մեծ դժվարությամբ տրտնջում էին:

Ապա Կարբու մեծամեծների խորհրդակցությամբ որոշեցին աշնան ուխտին ինչ եկամուտ որ գա, դրա կեսը տան Օհանավանքին և ոչ էլ աշնան ուխտի ծախսածին ընկեր լինեն, այլ միայն ինչ հասնում է աշնան ուխտին, նույնի կեսը տանեն առանց ծախսի: Այս որոշումն է մինչև այսօր. հինգշաբթի Օհանավանքի միաբանները գնում են, նստում այնտեղ, երկուշաբթի ամենը կիսում, բերում են Օհանավանք: Այնտեղ ես շատ անգամ գնացել եմ և արել այնպես, ինչպես գրեցինք: Իսկ մեր ժամանակ Մարտիրոս անունով մի եպիսկոպոս մատուռն ու գավիթը քանդեց, կոպիտ քարով շինեց մի

հոյակապ եկեղեցի և շուրջանակի պարսպեց: Հետո նրա եղբոր որդի Հովհաննես վարդապետը քանդեց այն և կոփածո քարերով մի հրաշալի եկեղեցի սարքեց, իսկ արևմտյան դռանը շինեց զանգակատուն: Բայց դեռևս տանիքի շարքերը չվերջացրած, մեռավ. իր եղբորորդի Դավիթ վարդապետը ավարտեց այն: Այժմ այդ հրաշափառ եկեղեցին կա, իսկ Դավիթ վարդապետը նրա առաջնորդն է:

ԳԼՈՒԽ ԺԶ
ԹԵ ԻՆՉ ԵՂԱՆ ՎՐԱՑ ԱԶԱՏՆԵՐԻ ՈՐԴԻՆԵՐԸ

Առաքել վարդապետին հարցրի վրաց (ազատների) որդիների մասին, թե ինչ եղան: Եվ ասաց, գիտեմ, որ մնացին այստեղ՝ այս երկրում, բայց չգիտեմ, թե ինչ եղան: Բայց իմ հայրը՝ Զաքեի Մկրտիչը վրաց (ազատների) որդիներից էր և չափազանց ճոխաբան ու ճարտարախոս էր. սովորել էր պարսից ու գաբրերի լեզուները, կարդացել էր Սաղմոսը և անգիր գիտեր: Նա մի գիրք ուներ, որ վաղուց գրել էր իբրև ժողովածու բազմաթիվ բաների, նաև գրված կար խոսք որդուց որդի մինչև իմ պապ Խաչատուրը: Իսկ իմ հայրը գրել էր հոր, իր եղբայրների և իր մասին: Այդ գիրքը գտնվում էր մեզ մոտ, երբ ահավոր երկրաշարժը եղավ, այդ գիրքը անհայտացավ: Բայց վրաց (ազատների) որդիների կարգը գրված էր հետևյալ կերպ. ես կարդացի այն, ինչ գրված էր, իսկ վրաց զավակները մնացին Օհանավանքում: Երկու տարի հետո հրաման տվին գնալ, ուր կամենում են: Երկուսը գնացին իրենց երկիրը, մեկը մեռավ Օհանավանքում, մեկը դարձավ վարձու մշակ մի ոմն վրացու և գնացին Հունաստան: Մեկը կապանքներից ազատվեց, երբ բանտում էին և փախավ: Իսկ յոթը գնացին իրենց երկիրը ասելով՝ գնանք մեր երկիրը, մեզ պատանդ կուղարկեն Պարսկաստան և մեզ նրանք մեր հավատքից կհանեն, մեզ համար լավ է մնալ այս բարի ու գովելի երկրում: Եվ այսպես բոլորը ցրվեցին:

Մի ոմն՝ Թեին անունով, մնաց Օհանավանքում և այժմ կոչվում են Թեինենք: Մեկը Ազիպե անունով, գնաց Եղվարդ և այժմ (տոհմը) կոչվում է Ազիբեկենք: Մնուցա անունով մեկը գնաց Քանաքեռ և ահա կոչվում են Մոծակենք: Խաչո անունով մեկը գնաց Մուղնի,